

ՊԱՇՏՈՆ

ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐ
ԱՃԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
ԱՃԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Վճարային համակարգերի հետ համագործակցության
և քարտային գործարքների մոնիտորինգի բաժնի
Մասնագետ
Լրիվ դրույք
Հերթափոխային գրաֆիկ (երեկոյան և գիշերային)
ք. Երևան, ՀՀ
Հնարավորինս շուտ
17/11/2022
02/12/2022
Անորոշ՝ երեք ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն Վճարային համակարգերի հետ համագործակցության և քարտային գործարքների մոնիտորինգի բաժնի մասնագետի հաստիքին ոչ աշխատանքային ժամերին և օրերին հերթապահություն իրականացնելու նպատակով փնտրում է արագ կողմնորոշվելու և զարգացած վերլուծական ունակություններ ունեցող ուսանողների, որոնք պատասխանատու են լինելու ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրականացնում է Բանկի թողարկված քարտերով կատարված գործարքների ուսումնասիրություն, վերլուծություն,
- Իրականացնում է հաճախորդների հետ կապի հաստատում և ճշտումների կատարում կատարված քարտային գործարքների իսկության ստուգման նպատակով,
- Իրականացնում է Բանկի սպասարկման ցանցում (բանկոմատներ, ֆիզիկական և վիրտուալ առևտրի/սպասարկման կետեր) կատարված գործարքների ուսումնասիրություն, վերլուծություն,
- Պատրաստում է հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿՎՎՈՐՈՒՄՆԵՐ

- Համակարգչային գիտելիքներ
- Հաղորդակցման հմտություններ
- Անգլերենի և ռուսերեն լեզուների լավ իմացություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Վերլուծական մտածողություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ենթապահություն և պատասխանատվության զգացում
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտ ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավորվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» անվանումով: ԱյԴԻ Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>: